*ԷԼԵՈՆՈՐԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ*
*ԵՊՀ, Հայագիտական կենտրոն*

# ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ԵՂԵՌՆԸ ԺԱՆ ՄԱՐԻ ՄՈՐԳԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Նշանավոր հնագետ, երկրաբան, պատմաբան և ազգագրագետ Ժան Ժակ Մարի Մորգանը (1857 – 1924 թթ.) պատկանում է 19-րդ դ. երկրորդ կեսի – 20-րդ դարի առաջին տասնամյակների ֆրանսիական հռչակավոր հայագետների համաստեղությանը, որի ներկայացուցիչներն իրենց գիտական գործունեությունը զուգորդում էին Հայաստանի ժամանակի վիճակի, քաղաքական, հասարակական կյանքի ուսումնասիրությամբ և, որպես կանոն, հայ ժողովրդի շահերի ջերմ պաշտպանությամբ, քանի որ դրանք համապատասխանում էին մարդկության այնպիսի վեհ գաղափարներին, ինչպիսիք են ազատությունը, ժողովուրդների ազատ ինքնորոշումն ու զարգացումը: Ե՛վ որպես մարդ, և՛ որպես գիտնական Մորգանը երբեք չդավաճանեց այդ սկզբունքներին և հումանիստական իդեալներին:

Ժամանակակիցը և ականատեսը լինելով Օսմանյան Թուրքիայի, ապա երիտթուրքերի կազմակերպած հայոց տեսական ցեղասպանությունների, նա չէր կարող անտարբեր մնալ այդ զանգվածային բարբարոսության հանդեպ և բազմիցս անդրադարձել է հայոց հարցին՝ հատկապես իր «Ակնարկ ազգությունների մասին» (1917), «Արևելքի բարբարոսների դեմ» (1918) և «Հայ ժողովրդի պատմություն» (1919) աշխատություններում:

Մորգանը հայկական հարցը կապում է պետական կառուցվածքի երկու հակադիր սկզբունքների հետ, որոնք մարդկության ահավոր աղետի՝ 1914-1918 թթ. համաշխարհային պատերազմի պատճառը դարձան: Առաջինը՝ համաշխարհային տիրապետության սկզբունքն է, որ հիմնվում է կոպիտ ուժի վրա և նույնքան հին է, ինչպես մարդկությունը: Համաշխարհային քաղաքականության այս տեսությունը սերել է բարբարոսությունից: Ըստ Մորգանի՝ երկրորդ սկզբունքը արդարությամբ և առաջադիմության արդյունքում ծնված մի գաղափար է, որ ենթադրում է ազգությունների, նրանց ազատության օրինական պահանջների հարգում՝ ինքնուրույնություն տալով կամ պաշտպանությունը հանձնելով հզոր, բայց արդար տերերին: Այս սկզբունքը Մորգանը քաղաքականության արդյունք է համարում: Պատմությունը բազմաթիվ օրինակներ է տալիս, որ մի ազգի իշխանությունը մյուսի վրա կարող է միայն ժամանակավոր լինել: Այս դրույթի վառ վկայություններն են հին աշխարհի կայսրությունները (ասորական, պարսկական, հունական, հռոմեական, արաբական), որոնք տիրում էին հսկայական տարածքների և ժողովուրդներին պարտադրում նյութական և հոգևոր ստրկություն:

Ազգային հարցը Մորգանը արդարացիորեն համարում է մարդկության պատմության ամենաբարդ խնդիրը: Անդրադառնալով այդ բարդ խնդրին և վերը նշված երկու հակադիր սկզբունքների հարաբերակցությանը՝ գիտնականը նշում է, որ հայ ժողո-

վուրդը բոլոր այն ժողովուրդներից, որ կոչված են վերականգնել իրենց քաղաքական իշխանությունը, ամենահետաքրքիր և ամենաարժանավորներից է, քանի որ նա կարողացավ դարերով պահպանել իր ինքնությունը, հոգևոր ժառանգությունը, ավանդությունները, նախնիների լեզուն և կրոնը, չնայած դաժան հետապնդումներին և ջարդերին: Հայկական այդ կենսունակությունը «Արևելքի պատմության ամենանշանակալից փաստերից է, գրեթե միակն իր տեսակի մեջ»,- նշում է Մորգանը՝ ավելացնելով, որ հայերը բարոյական ուժ ունեցան՝ հակադրվելու պատմության փոթորիկներին և կարողացան պահպանել ազգային մտավոր ու բարոյական ողջ ժառանգությունը:

Ահա թե ինչու իր «Ակնարկ ազգությունների մասին» գրքի երկրորդ մասը նա նվիրում է հայ ժողովրդին՝ ցույց տալով ոչ միայն «աշխարհին անհայտ արցունքներն», այլև նրա հույսերը, վերածնդի հնարավոր ուղիներն ու իրավունքը, որ հայերը նվաճել են բազմաթիվ տառապանքների և պայքարի գնով: Մորգանը մատնանշում է Հայաստանի քաղաքակրթող դերը, որը նա ստանձնել էր դեռևս երկու հազարամյակ առաջ, երբ Արևելքի ամենահզոր պետություններից էր: Գիտնականը ներկայացնում է եվրոպական ժողովուրդների հետ նրա բնական կապերը, արևելյան բարբարոսությանը հակադրվելու վսեմ ձգտումները՝ հուսալով, որ այդ էջերը կբացեն բոլոր հնարավոր ազատություններից օգտվող աչքերը Արևմուտքում, որ նրանք կտեսնեն ու կհասկանան հայրենիքից զրկված, անգամ ամենասրբազան զգացմունքներում ճնշված հայերի տառապանքները և իրենց կպատկերացնեն նրանց տեղը: Շարադրելով հայոց ողբերգական և հերոսական պատմությունը, Մորգանը այն հասցնում է մինչև 20-րդ դարը, երբ Հայաստանը բաժանված էր Ռուսաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Ամենածանրը հայերի վիճակն էր Թուրքիայում, ուր նրանք դաժան հետապնդումների ու պարբերական ջարդերի էին ենթարկվում: Այդ ծանր դրությունն էլ ավելի վատթարացավ սուլթան Համիդի օրոք, չնայած հայերը Թուրքիայում, ինչպես և բոլոր այլ երկրներում, ուր նրանց նետել էր ճակատագիրը, մեծ դեր էին խաղում պետական կառավարման, առևտրի, արդյունաբերության բնագավառներում: Իրենց խելքով, եռանդով, աշխատասիրությամբ նրանք մեծապես նպաստում էին այդ երկրների բարգավաճմանը և բարեփոխություններին: Հայերի ձգտումը դեպի հասարակական կյանքի քաղաքակիրթ ձևերը «անհարմար» ազգ դարձրեց նրանց թուրքական կառավարության համար, որի սահմանադրությունը, թուրք մի պաշտոնյայի խոսքերով «քառակուսի անիվ» էր համարվում: Հայոց շարժման առաջնորդները ջանում էին շրջել կայսրությունը սահմանադրական ուղու վրա: Մորգանը նման մտածողությունը միամտություն էր համարում, քանի որ Թուրքիան չէր կարող և ամենևին էլ մտադիր չէր անկեղծորեն բարեփոխումներ սկսել, առավել ևս որևէ ինքնուրույնություն տալ հայկական գավառներին: Երկրում աճում էին հայ գաղութները, հիմնվում նոր դպրոցներ, պարբերականներ, իսկ թուրքերի գիտակցության մեջ օրեցօր ատելություն էին սերմանում հայերի և մյուս քրիստոնյաների հանդեպ:

Մորգանը շարադրում է հայկական հարցի երկար ու կնճռոտ ուղու փուլերը միջազգային տարբեր հավաքներում, կոնֆերանսներում՝ հանգամանորեն կանգ առնելով վերջինիս դիվանագիտական պատմության վրա, խոսում բազմաթիվ այնպես էլ չիրագործված բարեփոխումների որոշումների մասին, որոնք միայն խոստումներ, «մեռած

տառ» էին մնում: Եվ զարմանալի չէր, քանի որ դա եվրոպական երկրների մշտական մրցակցության, ազդեցության ոլորտների համար պայքարի, Բալկաններում ու Առաջավոր Ասիայում Ռուսաստանի դիրքերի թուլացման քաղաքականության հետևանքն էր: Մորգանի կարծիքով Ռուսաստանի դիրքը Սան-Ստեֆանոյի պայմանագրի ժամանակ համապատասխանում էր թուրքական լծի տակ տառապող ժողովուրդների ակնկալիքներին: Նրա գնահատմամբ այդ պայմանագիրը «պատմության հիանալի էջ է», «դարեր շարունակ Եվրոպայի ամոթը հանդիսացող թուրքական կայսրության մասնատման ուղի»[1]: Այնուհետև Գերմանիայի ազդեցության շնորհիվ Բեռլինյան դաշնագիրը քանդեց Սան-Ստեֆանոյի ջանքերը և միջազգայնացրեց հայոց հարցը: Արևմտյան տիրությունները պարտավորվեցին հսկողության տակ առնել ծրագրված բարեփոխումները: Սակայն նրանց հսկողությունը «պատրանքային» էր, թեև այդ բարեփոխումները կենսական նշանակություն ունեին Թուրքիայի ճնշված ժողովուրդների, մասնավորապես հայերի համար և կոչված էին ապահովել նրանց անվտանգությունը: Բայց և այնպես եվրոպական պետությունները ոչ մի կերպ չկարողացան համաձայնության գալ և միասնական քաղաքականություն մշակել Թուրքիայի վերաբերյալ: Զայրալից հեգնանքով Մորգանը գրում է, որ դրանով իսկ Արևմուտքը կարծես Թուրքիային քաղաքականություն էր թելադրում նրանց հանդեպ, ում իր հնարավոր «կլիենտ» չէր համարում բառի ռոմանական իմաստով[2]:

Բնականաբար, թուրքական իշխանությունները չէին հավատում եվրոպական երկրների ոչ ասածներին, ոչ էլ գրածներին և հմտորեն էին օգտագործում նրանց մշտական տարանջատվածությունը: Թե՛ սուլթան Համիդը, թե՛ երիտթուրքերը ամուր էին ոչ մի իրական զիջում չանելու իրենց որոշման մեջ: Ավելին, բազմիցս խոստացած ռեֆորմների փոխարեն հայերին ենթարկում էին ահագնացող հետապնդումների, և Հայաստանն ամեն անգամ հոգեսարսուռ դաժանությունների թատերադաշտ էր դառնում:

Այդ կապակցությամբ հույժ բնորոշ են Մորգանի բերած թուրք մի խոշոր պաշտոնյայի խոսքերը «հայերին պատժելու» մշակված ծրագրի մասին՝ ի պատասխան «դրսից ճնշման»: Հարկադրված լինելով համաձայնվելու բարեփոխումների հերթական ծրագրին՝ խիստ զայրացած Համիդ II-ը հրամայեց հայերի ջարդ սկսել և միաժամանակ անգլիական կառավարությանն ուղղված գրության մեջ «ազնիվ խոսք» էր տալիս, որ բարեփոխությունների բնագիրը ձեռքին՝ անձամբ կհետևի յուրաքանչյուր կետի կատարմանը: Այդ միջադեպը Մորգանը իրավամբ թուրքական դիվանագիտության ակնառու բնութագիր է համարում՝ «իրեն հատուկ նենգությամբ, խաբուսիկ կերպարանքի տակ փաստերի ու մտադրությունների իրական բարբարոսությունը թաքցնելու ունակությամբ», հանգիստ անպատկառությամբ խոստանալու այն, ինչ ամենևին էլ մտադիր չէ կատարելու: Եվ ի լրումն ամենի՝ կեղծ հայրական քաղցր տոն համոզելու համար, որ իրենք՝ թուրքերը, անարդար նախապաշարմունքի կամ նողկալի զրպարտանքի զոհ են[3]:

Ի՞նչ կարող էին սպասել հայերը նման «տերերից», ի՞նչ հույս դնել տարանջատված

---

[1] **Morgan J.,** L'Histoire du peuple arménien. Paris, 1919, p. 256.

[2] Հին Հռոմում «Կլիենտներ» էին անվանում ոչ լիիրավ քաղաքացիներին, պլեբեյներին, ստորին դասի մարդկանց, ովքեր հանձնվում էին «պատրոն» կոչվող պատրիկի հովանավորության տակ:

[3] **Մորգան Ժ.**, Հայ ժողովրդի պատմություն, Փ., 1919, էջ 260 (ֆրանս.):

Եվրոպայի վրա: Մորգանի տված այս հարցերն, իհարկե, լոկ հռետորական իմաստ ունեին: Գիտնականը գրում է, որ հայերի դիրքորոշումը վշտի այդ բոլոր դարերի ընթացքում եղել է արժանավոր ու հերոսական: Արժանավոր, քանի որ ժողովուրդը հավատարիմ մնաց իր կրոնին, լեզվին, ազգային ինքնությանն ու ավանդույթներին: Հերոսական, որովհետև Հայաստանը «չսահմանափակվեց արցունք թափելով, այլ շատ անգամ վիրավորված լինելով իր ամենասրբազան զգացմունքներում, զենք էր վերցնում և արյամբ վճարում իր հոգու ապստամբության համար»: Իրենց ազատագրումը հայերը միայն արտաքին միջամտությամբ չէ որ սպասում էին, այլ գիտակցում, որ ազատությանը պայքարով են արժանանում: Ե՛վ Մեծ Հայքում, և՛ Կիլիկիայում նրանք բազմիցս ապստամբում էին, բայց այդ շարժումները, դժբախտաբար տեղական բնույթ էին կրում և պարտությամբ էին ավարտվում:

Նշելով հայերի միամտությունն ու բարեհոգությունը՝ Մորգանը ընդգծում է, որ անգամ 1894-1896 թթ. ջարդերից հետո, երբ ոչնչացվել էին 300 հազարից ավելի հայեր, հազարավոր գյուղեր մոխիր դարձվել, նրանք նորից դաժանորեն խաբվեցին՝ հույս կապելով բարեփոխումներ անցկացնելու երիտթուրքերի խոստումների հետ: Հայերը մեծապես օգնեցին երիտթուրքերին իշխանության հասնելու գործում, նրանցից շատերին մահից փրկեցին՝ թաքցնելով իրենց տներում և սեփական կյանքը վտանգի տակ դնելով: Գիտնականը ցավով նշում է, որ երիտթուրքերին օգնելու համար հայերը վճարեցին արյան հեղեղներով, քանի որ Համիդը չներեց նրանց: Սուլթանը կարևորում էր ձեռքի տակ փաստաթղթեր ունենալ հայերի դեմ՝ արևմտյան պետությունների առաջ իր գործողություններն արդարացնելու և օրինականացնելու համար՝ ներկայացնելով այդ հանցագործություններն իբրև պետական նկատառումներով թելադրված «արդարադատության ակտեր»: Այդ նպատակով հայերին ենթարկում էին ահավոր տանջանքների՝ ստիպելով ստորագրել սուլթանին ուղղված դիմումներ, ուր իրենց բարեկամներն ու հարևանները մեղադրվում էին պետական դավաճանության մեջ: Տանջանքների զոհերը աղաչում էին դահիճներին հանուն Աստծո ողորմածության մահ շնորհել իրենց:

«Այդ արյունոտ սանձարձակությունը զայրույթի պոռթկում առաջացրեց ողջ Եվրոպայում, բայց, այնուամենայնիվ, ոչ մի երկիր չհամարձակվեց վճռական գործողությունների դիմել, ինչպես պահանջում էին հանգամանքները»,- գրում է հեղինակը:

Այսպիսով, հայերի բոլոր զոհաբերություններն ու ջանքերը ապարդյուն անցան, ակնկալիքները չարդարացան: Իրենց օգնելու համար երիտթուրքերը «առատորեն» հատուցեցին հայերին, ովքեր իրենց սեփական ուժը զգալով՝ այլևս չէին թաքցնում իրենց հայատյաց մոլեռանդությունը:

Երիտթուրքերը ծրագրել էին ոչնչացնել բոլոր «անհավատներին», արմատախիլ անել Եվրոպայի որևէ միջամտություն իրենց գործերին և ստեղծել պանթյուրքիզմի կայսրություն: Ուստի՝ հայերի հավատարմությանը երիտթուրքերը Ադանայի ջարդերով պատասխանեցին՝ բացելով «ամենաբարբարոսական հանցագործությունների մի շարք, որը երբևիցէ արձանագրել էր պատմությունը»[4]: «Երիտթուրքերը շարունակեցին սուլթան Համիդի արյունոտ գործը՝ հասցնելով այն պետական քաղաքականության մա-

[4] Նույն տեղում, էջ 273:

կարդակի»,- գրում է Մորգանը:

Գիտնականը մերկացնում է Գերմանիայի չարագույժ, հանցավոր դերը այդ գործում: Ջարդերը կազմակերպելու և դրանց «թիկունքն» ապահովելու համար Թուրքիային անհրաժեշտ էր Գերմանիայի օգնությունը, որը և պատրաստակամությամբ նա տրամադրեց:

«Ընդդեմ Արևելքի բարբարոսների» ակնարկում[5] Մորգանը վկայաբերում է «Էկլեր դը Մոնպելյե» լրագրից բազմաթիվ հոդվածներ այն մասին, որ Գերմանիայի խորհրդականները և սպաները աջակցում էին Թուրքիային կազմակերպելու և իրագործելու ջարդեր: Նրանք մշակեցին ցեղասպանության մի հատուկ մեթոդ, որը և ապահովեց դրա «հաջողությունը»: Մորգանը գրում է, որ այդ մեթոդը, որն իրագործվեց Թուրքիայի ամբողջ տարածքում, բաղկացած էր չորս փուլից.

1. Հայ երիտասարդների զորակոչ, ընդ որում նրանց ոչ թե ճակատ էին ուղարկում, այլ օգտագործում ճանապարհաշինարարական աշխատանքներում՝ հետագա զանգվածային ոչնչացմամբ: Դրանով իսկ հայ բնակչությունը զրկվում էր դիմադրության որևէ հնարավորությունից: Միաժամանակ զինում էին թուրքերին և հրոսախմբեր ստեղծում ազատ արձակված հանցագործներից ու քոչվոր քրդական ցեղերից:
2. Անպաշտպան մնացած կանանց, երեխաների ու ծերերի ահասարսուռ ջարդեր, թալան, ունեցվածքի, տների զավթում, երիտասարդ աղջիկների ու կանանց վաճառք:
3. Կենդանի մնացած մարդկանց տեղահանություն թուրք ոստիկանների հրացանների փողերի տակ, որն ուղեկցվում էր հատկապես արական սեռի երեխաների ու մեծերի ոչնչացմամբ: Դեր-Զորի անապատ տանող ճանապարհը, որ ծածկվել էր սպանվածների, դաժան բռնությունների, քրդերի հարձակումների, սովի ու ցրտի զոհերի դիակներով, դարձել էր հայ ժողովրդի Գողգոթան: Այս ամենը համոզում էր Մորգանին, որ տեղահանությունը ոչ այլ ինչ է, քան քողարկված ցեղասպանություն:
4. Համակենտրոնացման ճամբարներ: Այստեղ հասնում էին հրաշքով փրկվածները, այստեղ էլ շարունակվում էին նրանց անմարդկային տառապանքներն ու խոշտանգումները, սարսափելի ստրկությունը, ուր ճնշող մեծամասնությունն անխուսափելիորեն դատապարտված էր մահվան:

Այսպիսով, մի սերնդի կյանքի ընթացքում երրորդ անգամ հայերը ծրագրված ցեղասպանության զոհ դարձան (1894-96, 1909, 1915): Բերվում են զանգվածային ջարդերի, վանդալիզմի մասին վկայող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք, ինչպես ինքը՝ հեղինակն է գրում, սարսափի դող են առաջացնում: Կենդանի մնացածները նախանձում էին մեռածներին, քանի որ իրենց տառապանքները դեռ չէին վերջացել: Տասնյակ էջերից, ուր զետեղված են բազմաթիվ վկայություններ, տարբեր հաղորդումներ, եվրոպացիների դիվանագիտական զեկույցներ ու նամակներ, հառնում է աներևակայելի մղձավանջի մի պատկեր: Արյունով հեղեղված փողոցներ, սարսափի ճիչեր, հուսահատված

[5] **Morgan J.**, Contre les barbares de l'Orient, P., 1918.

զոհերի հոգեվարք, գլխատված, ճղված որովայնով դիակների կույտեր, մարդկանց մարմինների անձև մնացորդներ տների առջև և արյունոտ կացիններ թափահարող, ամեն ինչ ջարդող-փշրող, երեխաներին կոխկրտող և, ի պատասխան խենթացած մայրերի աղերսանքների, նրանց գլխատող դահիճներ… Երեխաները ձեռքին կանայք, որ ժայռերից ցած էին նետվում, որպեսզի խուսափեն բռնությունից և ծաղր ու ծանակից…

Ամփոփելով այս փաստաթղթերը՝ ցասումով լի գիտնականը նշում է. «Աշխարհում չկա մի լեզու, որը բավականապես հարուստ ու գունագեղ լինի նման հրեշություններ նկարագրելու համար, արտահայտելու ֆիզիկական ու հոգևոր տառապանքները, որ կրում են այս անմեղ նահատակները, մինչև որ երկինքը նրանց հավերժական քուն պարգևի:

Ահավոր ջարդերի հուսալքված մնացորդներ, բոլոր իրենց հարազատների և թանկագին էակների մահվան վկաներ - այդ «բախտի ընտրյալները» այնտեղ են, համակենտրոնացման ճամբարներում՝ ենթարկված ամեն տեսակի լուտանքների, դատապարտված ուժասպառ լինելու թուրքական պաշտոնյաների, գերմանական սպաների ու տեղի ոստիկանների աչքի առջև: Ոչ մի մեկնաբանություն ոչինչ չէր ավելացնի վերը նկարագրված սարսափի էջերին, որոնք պաշտոնական վավերագրերի շնորհիվ այսօր հայտնի դարձած դաժանությունների լոկ թույլ արտահայտությունն են»,- զայրալից վրդովմունքով գրում է հեղինակը:

«Հայաստանն առանց հայերի». այս սարսափելի բառերը, որ հրեշավոր քաղաքականության խորհրդանիշն էին և սուլթան Համիդի երազանքը, մարմնավորվեցին, իրականություն դարձան: Բայց չնայած ցեղասպանության ահռելի չափերին, Մորգանը համոզմունք է հայտնում, որ, այնուամենայնիվ, «հայ ազգը ոչնչացված չէ, ծունկի չի բերված և ողորմություն չի խնդրում: Նրա ազգային ոգին երբեք այսքան բոցավառ չի եղել, քանի որ ոճրագործությունը ոչ թե սպանում, այլ, ընդհակառակը, ահագնացնում է խիզախությունը»: Մյուս կողմից, այս ցեղասպանության հանդեպ եվրոպական դիվանագիտության լռությունը Մորգանը ստորություն և խայտառակություն է համարում, որովհետև այն խրախուսում է դահիճներին նրանց բարբարոսության մեջ, սպանում զոհերի հույսն ու հավատը: Ճիշտ է, այս անգամ ևս եվրոպական տերությունները Թուրքիային ուղղեցին պաշտոնական բողոքներ և նախազգուշացումներ, որոնք Մորգանը «պլատոնական» է անվանում: Թուրքական կառավարությունը ոչ մի ուշադրություն չէր դարձնում սպառնալիքներին, որոնց ոչ մի էական քայլ չհաջորդեց, և Ֆրանսիայի նախագահ Բրիանը ստիպված էր ասել. «Առաջին անգամ մեր երկիրը անզոր գտնվեց շարունակել քաղաքակրթական առաքելությունը Թուրքիայում և հակադրել այն նրա տերերի բարբարոսությանը»[6]:

Մորգանի կարծիքով, հայերի և մյուս քրիստոնյա ժողովուրդների անվտանգութ-

---

[6] Բրիան Արիստիդ (1862-1932) – Ֆրանս. պետական գործիչ, դիվանագետ, 1915-1917, 1921-1922 թթ. զբաղեցրել է Ֆրանսիայի պրեմիեր-մինիստրի պաշտոնը: Ցեղասպանության տարիներին հանդես էր գալիս հայ ժողովրդի «պաշտպանի» դերում՝ խոստանալով բավարարել նրա օրինական իրավունքներն ու պահանջները: Սակայն 1921-1922 թթ. նրա ջանքերով քեմալական կառավարության հետ սեպարատ դաշնագիր կնքվեց և ֆրանսիական զորքերը դուրս բերվեցին Կիլիկիայից, որի հետևանքով տեղի հայ ու հույն բնակչությունը ստիպված եղավ թողնել հարազատ վայրերը և հեռանալ երկրից:

յունն ապահովելու համար անհրաժեշտ է թուրքերին ենթարկել օտարերկրյա կառավարությանը, քանի որ այնքան ժամանակ, ինչքան թուրքն իրեն ուժեղ զգա, չի հրաժարվի բարբարոսական մոլեռանդությունից: Վսեմ հումանիստական գաղափարների, արդարության, ժողովուրդների իրավունքների ջատագով լինելով՝ Մորգանը հստակորեն սահմանազատում է թուրքերին քաղաքակիրթ ազգերից: Խորապես ցնցված և բնական զզվանք զգալով արյունոտ գազանությունների հեղինակների և կատարողների նկատմամբ՝ նա զայրալից վրդովմունքով գրում է ոչ միայն թուրք մարդասպանների ու թալանչիների բարբարոսական բնազդների մասին, այլև համապատասխան տրամաբանական հետևություններ և ընդհանրացումներ անում դարերի ընթացքում դրսևորված նրանց գծերի ու հակումների վերաբերյալ:

Եվրոպայում քիչ են ծանոթ Արևելքի պատմությանը և հաճախ հակված են թուրքերի մասին դատել Փարիզում ապրող մի քանի քաղաքակրթված մարդկանց օրինակով: Սակայն, չնայած հինգ դար Եվրոպայի հետ շփվելուն, թուրքերը, Մորգանի համոզմամբ, «մնացել են այնպիսիք, ինչպիսիք եղել էին սելջուկների դարաշրջանում, նրանց ավանդական ոգին չի փոխվել և որտեղ էլ որ ապրեն՝ Եվրոպայում թե Ասիայում, «երիտ» թե «ծեր»՝ թուրքերը միշտ վտանգ են ներկայացնելու քաղաքակիրթ աշխարհում»:

Համեմատության տեսակետից ուշագրավ է հայ ժողովրդին տրված բնութագրումը, որը մասամբ արդեն արտացոլվել է այս հոդվածի սկզբում: Մորգանը նշում է հայերի բազմազան արժանիքները՝ գործարար խելքը, եռանդը, ձեռներեցությունը, աշխատանքային համառությունն ու խիզախությունը, որոնց շնորհիվ Անդրկովկասում առևտրական, ֆինանսական, արդյունաբերական կառուցվածքներ ստեղծվեցին, և երկիրը վերափոխվեց՝ դառնալով ցարական կայսրության ամենահարուստ գավառներից մեկը: Միաժամանակ հեղինակը հիացմունքով է արտահայտվում հայ մտավորականության մասին, որը պատիվ է բերում իր ազգին, առաջնակարգ դեր խաղում ժողովրդի մտավոր զարգացման գործում, ամրապնդում նրա արիությունն ընդդեմ ճակատագրի փորձությունների: Ինչ վերաբերում է թերություններին, նա համամիտ է Բայրոնի հետ, որ դրանք հարկադրանքի, ճնշվածության թերություններն են[7]:

Ամփոփելով բազմաչարչար հայ ժողովրդի պատմությունը՝ ժողովուրդ, որ երազում է հայրենիքի վերականգման, դարեր ի վեր հայաբնակ շրջաններ ընդգրկող ինքնուրույն պետության ստեղծման մասին, Մորգանը նշում է, որ այդ պահանջները, սակայն, ամենևին չեն ենթադրում Տիգրան Մեծի թագավորության սահմանների վերականգնում: Այնժամ Հայաստանն ուներ 25 միլիոն բնակչություն, մինչդեռ այժմ հայ ժողովուրդը մոտ 4 միլիոն է, որի կեսն ապրում է Ռուսաստանի մեջ մտնող տարածքներում:

Եվրոպայի պատկերացմամբ, հայոց հարցը վերաբերում է Թուրքիայի 6 հայկական նահանգներին և Կիլիկիային, ուր արդեն 20 տարի շարունակվում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհին ցնցող ողբերգությունը: Այդ հինավուրց հողը, որ ողողված է հայերի արյունով, հնադարյան ժամանակներից նրանց հայրենիքն է եղել: Կատարված ողբերգություններից հետո, հեղինակի համոզմամբ, խոսք լինել չի կարող հայերին թուրքերի

[7] **Morgan J.**, Essai sur les nations, P., 1917, p. 67.

լծի տակ թողնելու մասին: Միամիտ համոզվածությամբ Մորգանը գրում է, որ Եվրոպան երբեք դրան չի համաձայնվի, թեև, նրա դիպուկ արտահայտությամբ, Եվրոպայի ու Թուրքիայի «դիվանագիտական կատակերգությունը» դեռ շարունակվում է: Բայց և այնպես Մորգանը համոզված է, որ միայն Եվրոպան կարող է «ուղղել աշխարհում կատարված ամենամեծ անարդարություններից մեկը»: Չէ՞ որ Եվրոպան բազմաթիվ զոհաբերություններ է արել ճնշված շատ ազգերի համար, թեև նրանք արյուն չեն թափել հանուն այդ նույն Եվրոպայի: Այսպես, հարյուրամյակ առաջ Եվրոպան օգնեց հույներին իրենց պետականությունը վերականգնելու, չնայած այն բանին, որ «հույները ոչինչ չէին արել նրա համակրանքին արժանանալու համար»: Եվ եթե Եվրոպան անցյալում ցնցվել էր՝ իմանալով թուրքական սրածությունից 50 հազար հույների զոհվելու մասին Կոստանդնուպոլսի առման ժամանակ, ապա ի՞նչ մտածել այսօր նրա վերաբերմունքի մասին արդեն 22 տարի տևող (1894 - 1916) և 1 միլիոնից ավելի զոհեր տված հայ ժողովրդի Գողգոթայի հանդեպ:

Մինչդեռ Կիլիկիան միջնադարի դժվարին շրջանում Եվրոպայի, հատկապես Ֆրանսիայի դաշնակիցը լինելով, սերտորեն կապված էր նրա հետ և հերոսական հավատարմություն ցուցաբերեց արևմտյան քաղաքակրթությանը: Դիմելով Կիլիկիայի պատմությանը և բարեբեր, բայց թուրքերի լծի տակ աղքատացած այդ երկիրը նկարագրելուն՝ Մորգանը վկայակոչում է հայտնի արևելագետ ակադեմիկոս Շլյումբերժեի «Հայերը միջնադարում» հոդվածը, ուր ըստ արժանվույն գնահատվում է հայ ժողովրդի հերոսությունը զավթիչների դեմ անհավասար պայքարում:

Հիշեցնելով վեց դար շարունակվող Եվրոպայի այդ պարտքը հայերին, որը գնալով ավելի է մեծացել, Մորգանը կոչ է անում ամեն ջանք գործադրել հայ ժողովրդի հայրենիքը վերականգնելու համար: Հայերի ապագան, համաձայն առկա հնարավորությունների, Մորգանը տեսնում է որպես մեծ ազատություններով և հարաբերական ինքնուրույնությամբ օժտված Ռուսաստանի հայկական գավառ կամ Անտանտի պետությունների հովանավորության տակ, բայց սեփական դրոշով, անկախ պետություն ստեղծելու մեջ: Եվ ինչպիսին էլ որ լինի թուրքական տարածքների բաժանման եղանակը, ինչպիսին էլ որ լինի հայ ժողովրդի տարածքների և քաղաքական իրավունքների վերականգնումը, դա, ըստ Մորգանի, արդար գործ է, որը պետք է իր մեջ ընդգրկի նաև այդ նահատակ ժողովրդին պատճառած հսկայական նյութական վնասը:

Մեծ հումանիստի հույսը պատմական արդարության հաղթանակի վրա, որ Խաղաղության Կոնգրեսի անդամները կլսեն ազգի ականավոր գործիչներից մեկի՝ Եգիպտոսի Մեծ նախարարի որդու՝ Պողոս Նուբար փաշայի կոչերը և տառապյալ հայ ժողովրդի համար, վերջապես, «ազատության արշալույս կբացվի», դեռ այսօր էլ արդիական է: Այն, սակայն, չիրականացավ քաղաքական արտաքին անբարենպաստ պայմանների պատճառով: